

ՀԱՏԿԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ՌԻԳՎԵԴԱՅԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Վ. Վ. ԱՌԱՐԵՆՅԱՆ

Հինդուիզմի սրբազան գիրքը՝ Ռիգվեդան (այսուհետև՝ ՌՎ), հին հնդկերենով ստեղծված ամենավաղ հուշարձանն է (մ. թ. ա. II հազարամյակի վերջ—I հազարամյակի սկիզբ)։ Այն կազմված է 1028 ներբողից (Rg-veda բառացի նշանակում է «ներբողների գիտելիք»), որոնք հիմնականում ղոհարերությունների ժամանակ կատարվող ձոներգեր են՝ ուղղված հին հնդկական աստվածներին։

ՌՎ-ն չորս վեդաներից առաջինն է։ Վեդաները կազմում են՝ Ռիգվեդան (այսինքն՝ «ներբողների վեդա»), Յաջուրվեդան («Ձոհաբերական բանաձևերի վեդա»), Սամավեդան («Մեղեդիների վեդա») և Աթարվավեդան («Հմայիլների վեդա»)։

ՌՎ-ի 1028 ներբողները կազմում են 10 գրքեր (mandala—բառացի՝ շարք)։ Դրանք դրի են առնվել համեմատաբար ուշ։ Դրեր շարունակ փոխանցվել են միայն բանավոր։ Նվ, սակայն, ՌՎ-ն ներկայացնում է հնագույն հուշարձանի մի եզակի օրինակ. որ մեր օրերն է հասել տեքստի բարձրագույն աստիճանի ճշգրտությամբ։

ՌՎ-ն բաղմիցս թարգմանվել է եվրոպական լեզուներով։ Ամենանշանակալից թարգմանություններն են Լ. Ռենուի թարգմանությունը՝ («Վեդայական և պալինիական էություններ» ստվարահատոր սշխատության մեջ), որ պարունակում է առանձին աստվածներին՝ Սոմային, Միարա-Վարունային, Ադիտյաներին, Ուշասին և այլոց նվիրված ներբողների փնջերի ֆրանսերեն արձակ թարգմանությունը¹։ Լ. Ռենուն ֆրանսերեն է թարգմանել նաև ՌՎ-ի փոխաբանական ներբողները²։ Գերմաներեն ամբողջական թարգմանություններից ամենահինն է Գեդդերի արձակ թարգմանությունն է³։ Գեդդերը հրատարակել է նաև ՌՎ-ի 70 ներբողի չափածո թարգմանությունը⁴։ Անգլերեն առաջին ամբողջական և չափածո թարգմանությունն իրականացրել է Ռ. Գրիֆֆիտը⁵։ Ինչև սովետական վեդաագետ Տ. Յա. Նիդարենկովայի բարձրարժեք թարգմանությունը, կային ՌՎ-ի միայն հատուկենտ ներբողների ուսերեն թարգմանություններ՝ Տ. Նիդարենկովայի թարգմանությունն⁶ ընդգրկում է 104 ներբող և ամբողջական պատկերացում է տալիս հուշարձանի բովանդակության և առանձին մասերի համամասնության մասին։ Թարգմանությունն ուղեկցված է ընդարձակ առաջաբանով և մանրամասն ու սպառիչ մեկնաբանություններով։

¹ L. Renou. Etudes védiques et panincennes. T. I—XVII, Paris, 1975—1968.

² L. Renou. Hymnes spéculatifs du Véda. Paris, 1956; Hymnes et prières du Véda. Traduit par L. Renou. Paris, 1938.

³ Der Rigveda in Auswahl, Hrsg. K. Geldner. Stuttgart, 1907; K. F. Geldner. Der Rigveda übersezt und erläutert. Göttingen—Leipzig, 1923.

⁴ Siebzig Lieder des Rigveda. Tübingen, 1875.

⁵ R. I. H. Griffith. The Hymns of the Rigveda. Translated with a Popular Commentary. 2nd ed, Benares, 1896.

⁶ Ригведа. Избранные гимны. Перевод, комментарий и вступительная статья Т. Я. Елизаренковой. М., 1972.

Ռվ-ի հայերեն թարգմանությունը բնագրից իրականացվում է առաջին անգամ: Ներբողների հայերեն թարգմանությունները համեմատվում են Ա. Մակգոնելի անգլերեն⁷, Կ. Գելգների գերմաներեն և Տ. Յա. Ելիզարենկովայի ռուսերեն թարգմանությունների հետ: Յավոք, առայժմ ձեռքի տակ չունենք Լ. Ռենուի ֆրանսերեն թարգմանությունը և XIV դարի հնգիկ մեկնիչ Մայանայի բացատրությունները⁸: Օգտագործվել է նաև օժանդակ գրականություն, որ վերաբերում է հուշարձանի առանձին մութ հատվածների վերծանմանն ու իրականությունների (բժանիմ) բացատրությանը:

Թարգմանության համար հատկացված ժամանակն ու տեմպերը, ինչպես նաև: ընթերցողների պահանջները թելադրեցին, որ Ռվ-ի հայերեն հատրնտիրը պետք է ընդգրկի 33—35 ներբող: Ներբողներն ընտրվել են՝ հաշվի առնելով ընթերցողների գեղագիտական պահանջմունքները, ճանաչողական հետաքրքրությունները: Միաժամանակ ձգտել ենք ընտրել ներբողներ, որոնք ներկայացնում են հին հնդկական գլխավոր աստվածություններին (Ինդրային՝ 2 ներբող, Սոմային՝ 1 ներբող, Ագնիին՝ 3 ներբող և այլն):

Ռվ-ի վերջին շրջանի բոլոր թարգմանությունները տողացի են. մենք փորձել ենք տողացի թարգմանության հետ միաժամանակ թարգմանել նաև շափածո:

Ռվ-ի թարգմանությունը կապված է մեծ դժվարությունների հետ: Տ. Ելիզարենկովան մի շարք խոչընդոտներ է նշում, որոնց բախվում է Ռվ-ի թարգմանիչը⁹: Դրանց մի մասը պայմանավորված է քերականությամբ: Մի շարք քերականական կատեգորիաներ, որ օգտագործվում են Ռվ-ում, զուգահեռ չունեն արևմտաեվրոպական և սլավոնական լեզուներում: Մասամբ էլ դժվարություններ կապված են իմաստային ոլորտի հետ, քանի որ որևէ ժամանակակից լեզվի և Ռվ-ի լեզվի իմաստային դաշտերի կառուցվածքները շատ դեպքերում տարբեր են: Վեդայական բառը թարգմանվելիս լիովին կորցնում է այն իմաստային կապերն ու զուգորդությունները, որոնք բնորոշ են բնագրի համապատասխան բառին:

Բացի դրանից, Ռվ-ի բառապաշարի մի մասը ամբիվալենտ է, այսինքն՝ բաժանվում է երկու հակադիր ոլորտների. բարենպաստ (աստվածներ և այլ բարեհաճ էակներ) և անբարենպաստ (աստվածներին թշնամի ուժեր): Նույն բառը համատեքստում կարող է հակադիր իմաստներ ունենալ: Այսպիսի ամբիվալենտ բառերն օգտագործվում էին մոգական բանաձևերի մեջ, որոնք նպատակ ունեին միաժամանակ և՛ պահպանել ընկերներին, և՛ ջախջախել թշնամուն: Այդ բառերի գոյությունը բացատրվում է հուշարձանի մոգական բնույթով:

Տ. Ելիզարենկովան իրավացիորեն գտնում է, որ Ռվ-ի տեքստի վերարտադրության ժամանակ ծագող դժվարությունները հաղթահարելու համար մի միասնական մեթոդ չի կարող լինել, թարգմանիչը ստիպված է մեկնաբանությունից անցնել թարգմանությանը և հակառակը: Պետք է, որքան հնարավոր է, ուսումնասիրել նշանակելին, այսինքն տարբեր կարգի վեդայական իրականությունները, քանի որ այս բնագավառում ունեցած հաջողություններից է կախված առավել կամ պակաս համարժեք թարգմանության իրականացումը:

Թարգմանության մասին յուրաքանչյուր աշխատության մեջ բարձրացվում է ավանդական մի հարց. թարգմանության հնարավորության և անհնարինու-

⁷ A vedic Reader for students, by Arthur Anthony Macdonell. Oxford, 1917. Այս բրեստովյան ընդգրկում է Ռվ-ի 30 ներբող, նրանց անգլերեն թարգմանությունը՝ մանրամասն ծանոթագրություններով և նույն հեղինակի «A vedic grammar for students» գրքին արված համապատասխան հղումներով:

⁸ The sacred Hymns of the Brahmins. Together with the Commentary of Sāyana-nācarya. 2nd ed. vol. 1—3, London, 1888—1892.

⁹ Т. Я. Елисаренкова. О лингвистическом аспекте перевода «Ригведы». — История и культура древней Индии (к Международному конгрессу востоковедов). М., 1963, с. 101—117.

թյան հարցը: Թարգմանական հոգեբանության հիմքն այն հայեցակետն է, որ գեղարվեստական ստեղծագործությունն անկրկնելի և միաժամանակ ուսցիտելի կերպով անբացատրելի գործողություն է, և բնագիրը թարգմանությամբ ստեղծագործարար վերականգնելը դատապարտված է անհաջողության: Իսկ լավատեսները պնդում են, որ գեղարվեստական ստեղծագործությունը միայն ստեղծողի եղակի գործողությունը չէ, Իրա իրականացմանը և կոնկրետացմանը մասնակցում են շատ գործոններ, որոնք հեղինակից դուրս են գտնվում: Դրանցից մեկը թարգմանիչ-ընթերցողն է, որ վերլուծում է բնագիրը:

Այն թարգմանելի թեմատիկ իրադրությունները ծագում են մշակույթի տեսակների միջև եղած տարբերությունների, նրա դարգացման աստիճանի և որակի հետ կապված: Արիացիների մշակույթի եզակիությունը, վաղեմիությունը, սոցիալական և պատմական աստիճանը, աշխարհագրական դիրքը, ազգային առանձնահատկությունները պայմանավորում են այնպիսի նյութական և հոգեվոր արժեքների գոյությունը, որոնք բացակայում են այլ ազգային հանրությունների մոտ, իսկ քանի որ այդ ամենն իր արտացոլումն է գտնում լեզվում, ուստի և այդ փաստերը կազմում են տվյալ ժողովրդի լեզվի ֆունդի¹⁰ ինֆորմացիան, այսինքն՝ սոցիոմշակութային տեղեկություններ, որ բնորոշ են որոշակի ժողովրդի և ազգության, յուրացված են նրանց ներկայացուցիչների կողմից և արտացոլված են տվյալ ազգային հանրության լեզվում¹¹: Ֆունդին ինֆորմացիայի բովանդակությունը կազմում է այն ամենը, ինչը թարգմանության տեսության մեջ կոչում են «реалии» (իրականություն): Իրականությունը այն փաստերը, երևույթներն ու առարկաներն են, որոնք տվյալ ժողովրդի կյանքի յուրահատուկ կողմներն են և միաժամանակ նրանց անվանումը՝ բառեր և բառակապակցություններ: Ըստ բուլղարացի գիտնականներ Ս. Վլախովի և Ս. Ֆլորինի՝ թարգմանագիտության իրականությունը «այն բառերն ու բառակապակցություններն են, որ անվանում են որևէ ժողովրդի կյանքին (կենցաղին, մշակույթին, սոցիալական և պատմական զարգացմանը) բնորոշ օբյեկտներ, որոնք օտար են մեկ այլ ժողովրդի. հանդիսանալով ազգային և կամ պատմական կոլորիտի կրողներ, նրանք, որպես կանոն, ճշգրիտ համապատասխանություններ չունեն այլ լեզուներում, հետևաբար՝ և ընդհանուր հիմունքներով թարգմանության շնն ենթարկվում՝ պահանջելով հատակ մոտեցում»¹²:

Իրականությունների դասակարգման հարցում տարբեր թարգմանադեմոններ տարբեր մոտեցում են ցուցաբերում: Ելնելով ընձեռած նյութից, մենք հատկական բառապաշարը բաժանում ենք հետևյալ խմբերի՝ հիմնականում հետեվելով Վ. Ս. Վինոգրադովի և բուլղար գիտնականներ Ս. Վլախովի և Ս. Ֆլորինի դասակարգումներին:

Ազգագրական իրականություններ

1. Արվեստ և մշակույթ.

ա) Բանաստեղծական չափերի անուններ. tristubh (10.14.16)¹³—տրիտտր, gāyatrī (10.14.16)—գայատրի:

բ) Ծիսական առարկաներ. ghṛtā (1.85.3, 5.11.3)—զոհալուղ, barhīs (1.85.6)—զոհախոտ, qośadqoś, havis (10.121.1)—զոհախմբիչք:

¹⁰ Է. Ադայանը օգտագործում է «հատկական» տերմինը: Ունենք՝ «հատկական բառապաշար», «հատկական փոխառություններ» և այլն: Տե՛ս է. Գ. Ա. Ղալախ. Ընդհանուր և հայկական բառագիտություն. Երևան, 1984, էջ 169:

¹¹ В. С. Виноградова. Лексические вопросы перевода художественной прозы. М., 1978, с. 87.

¹² С. Влахов, С. Флорин. Непереводимое в переводе. М., 1980, с. 47.

գ) Ծեսերի անուններ. *trikadruka* (10.14.16) — տրիկադրուկ (Սոմալի եռօրյա հեղումը. որն անմիջապես հաջորդում էր հանգուցյալի գիակիզմանը)¹¹, *atirātrā* (7.103.7) — ցալգատուն (մեկ օր ու գիշեր տևող սոմալի զոհաբերության գիշերային հատվածի անվանումը):

դ) Կրոնական սպասավորների և հետևորդների անուններ. *udgātr* — ձոն-երգու (քուրմ, որ մասնակցում է սոմալի զոհաբերությանը, պարբերաբար կատարելով յուրահատուկ ձոներգեր (հիմներգեր)): *hōtr* (1.1.1) — ձոնասաց (քուրմ, որ բարձրաձայն ներբողներ է կարդում, ուղեկցելով երգիչների կողմից երգվող յուրաքանչյուր տունը): *ṛtvī* (1.1.1) — զոհագործ (քուրմ, բառացի՝ ջնա, ով զոհ է մատուցում ճիշտ ժամանակին): *ṛtv* — ծիսական գործողությունների կատարման ժամանակը, տարվա եղանակ. *yaj* — զոհաբերել: *brahmān* (1.125.5) — բրահման (զոհաբերությունը ղեկավարող քուրմ, որ լուռ գիտում է ծեսի ընթացքը և խառնվում այն ժամանակ, երբ պետք է ողջել որևէ մեկի սխալը): *puroṣita* (1.1.1) — քրմապետ (արքայական տան քրմապետը): *ṛṣi* (1.1.2, 1.125.5, 10.81.1) — իմաստուն, մարգարե: *bavismant* (10.125.2) — զոհախմբիչ լցնող:

ե) Խաղեր. *akṣa* (10.34.2 և ալև) — վեզ: *kṛta* (10.34.6) — էաշող նետում (վեզ խաղի տերմին):

2. Ազգային հանրությունների անուններ.

dāsa (2.12.4) — դասա (ոչ արիական ցեղերը):

3. Չափի միավորներ.

yōjana (1.35.8) — յոջան (երկարության միավոր):

Հասարակական-ֆաղափական իրակոյություններ

1. Ռազմական իրակոյություններ.

vājra (1.85.9) — գուրդ:

2. Հասարակական, քաղաքական կյանք.

vārṇa (2.12.4) — վարնա (բառացի՝ գույն, այստեղից էլ՝ ռասա, ցեղ իմաստները, քանի որ Հնդկաստանի բնիկ ցեղերն աչքի էին ընկնում մաշկի մուգ գույնով):

Աշխարհագրական իրակոյություններ

ա) Տեղանուններ. *Mūjavat* (10.34.1) — Մուջավատ (լեռան անուն, որտեղ աճում է ամենաբարձր որակի սոման):

բ) Կենդանիներ. *cicika* (10.146.2) — մի տեսակ թռչուն:

գ) Բույսեր. *vibhidaka* (10.34.1) — ծառի անուն:

դ) Բնությունների երևույթներ. *prāṇsī* (7.103.3) — անձրևային սեզոն:

¹³ Առաջին թվանշանը ցույց է տալիս Ռ-ի գրքի համարը, երկրորդը՝ տվյալ գրքում ներ-բողի համարը, երրորդը՝ քառասուղի համարը:

¹⁴ Իրակոյությունների բացատրության համար օգտվել ենք H. Grassmann. *Worterbuch zum Rig-Veda*. Leipzig 1872 բառարանից, ինչպես նաև գերմաներեն, անգլ-լեռեն, ռուսերեն վերոհիշյալ թարգմանությունների ծանոթագրություններից և օժանդակ այլ գրականությունից:

Դիցաբանական, փիլիսոփայական իրականություններ

ա) Աստվածների, հերոսների, իմաստունների անուններ. Agni—Ագնի, Indra—Ինդրա, Varuna—Վարունա, Mitra Միտրա, Rbhu—Ռիբհու, Asura—Ասուրա, Savitr—Սավիտար, Usas—Ուշաս, Marutah—Մարուտներ, Bharata—Բհարատա, Vasishtah—Վասիշթա և այլն:

բ) Աստվածների և այլոց մալիքի՝ Լգնիի մասին. citrasravastama (1.1.5)—ամենաշողշուղուն փառքով, dosavast (1.1.7)—խավարացի: Մարուտների մասին. vrşavraia (1.85.4)—հզորամբռի, śavasyú (1.85.3)—փառախուլի: Բնդրայի մասին. sisipra (2.12.6)—զնգաշուքի: Երկնքի մասին. suréas (1.160.3)—սերմնահորի: Մեռած նախնիների մասին. suvidatra (10.14.10)—գլուրազուտ և այլն:

գ) զիդաբանական վայրերի, օրվեկտների անվանումներ. rodasī (1.160.2)—երկաշխարհներ, rajasi—զույգ ոլորտը (երկնային և երկրային տարածությունները), Rasa (10.124.4)—Ռասա (զիդաբանական գետ, որ շրջանցում է երկինքն ու երկիրը, բաժանելով մարդկանց բնակավայրը դեերի կացարանից):

դ) Փիլիսոփայական հասկացություններ rta—օրենք, կարգ, ճշմարտություն:

Այս դասակարգման համար օգտագործվել է մինչ այժմ թարգմանված 25 ներքոդիր բնօրինակ նյութը: Առանձին խմբի մեջ են առանձնացվել փիլիսոփայական, զիդաբանական իրականությունները: Առաջինը վերոհիշյալ թարգմանագրողների մոտ բացակայում է, իսկ զիդաբանական իրականությունները դասակարգված են ազգագրական իրականությունների մեջ: Ինչ վերաբերում է աստվածների և այլոց վերաբերյալ մակդիրներին, որոնք իրենց համարժեքները հայերենում չունեն, ապա դրանք պայմանականորեն են դասակարգված իրականությունների շարքը: Դրանք հաճախ կայուն մակդիրներ են աստվածների համար և երբեմն վերածվում են դիմումի ձևերի, այնպես որ այդ բառերը ևս նպատակահամար էր մտցնել հատկական բառապաշարի մեջ:

Այժմ քննենք, թե ինչ միջոցներով են իրականությունները փոխադրվում թարգմանության լեզվի մեջ: Ս. Վլախովը և Ս. Ֆլորինը իրավացիորեն երկու հիմնական միջոց են մատնանշում. տառադարձությունը և թարգմանությունը. որոնք հակադրվում են միմյանց: Ա. Ա. Ռեֆորմատսկու խոսքերով առած՝ «1) թարգմանությունը ձգտում է «օտարը» առավելագույնս «սեփական» դարձնել, 2) տառադարձությունը ձգտում է պահպանել «օտարը» «սեփականի» միջոցով»¹⁵:

Տառադարձություն

Այս միջոցը ենթադրում է իրականության փոխադրումը բնագրի լեզվից թարգմանության լեզու վերջինիս տառագրական միջոցներով, առավելագույնս մոտեցնելով բնագրի հնչյունական ձևին: Թարգմանիչը ճիշտ պետք է կողմնորոշվի՝ տառադարձի տվյալ իրականությունը, թե թարգմանի: Վեդայական հատկական բառապաշարից հայերեն թարգմանության մեջ տառադարձվել են զիդանուններն ու անձնանունները:

1. Indra—Ինդրա, Soma—Սոմա, Agni—Ագնի, Varuna—Վարունա, Mitra—Միտրա, Visnu—Վիշնու, Bṛhaspati—Բրիհասպատի, Rbhu—Ռիբհու, Marutah—Մարուտներ, Pūṣan—Պուշան և այլն:

2. Բնության երևույթներ և տիեզերական օրվեկտներ մարմնավորող որոշ աստվածների անուններ կարող են և թարգմանվել, հատկապես բանաստեղծու-

¹⁵ А. А. Реформатский. Перевод или транскрипция?—Восточно-славянская ономастика. М., 1972, с. 312.

կան թարգմանության մեջ: Այսպես՝ Dyāvā-Prthivī—Երկինք—Երկիր, Usas—Արշալույս, Rātrī—Դիշեր, Sūrya—Արև, Արեգակ և այլն: Ահա, Օրինակ, Ուշաս աստվածունն ձոնված ներքողի առաջին տունը.

Usā uchānti samidhānē agnā
udyan sūrya urviyā jyotir asret
devō no atra savitā nṛ artham
prāsāvid dvipat prā catuṣpad ityaī

Երբ կրակն է բոցավառվում, Արշալույսը շողշողուն
եվ Արևը իրենց լույսը արդեն հեռուն են սփռել:
Եվ Սավիտար աստված ահա արդեն գործի է դրել
Երկտանի, շորթոտանի էակներին անհատնում:

3. Տառադարձման են ենթարկվում նաև որոշ այլ իրակություններ: Այսպես.

yōjana—յոջան: Այս բառը նշանակում է լծվածք, ինչպես նաև ճանապարհի այն հատվածը, որ ձիերի լծվածքով են անցնում: Այստեղից էլ yōjana բառը նշանակում է չափի միավոր: Ըստ հնդիկների պատկերացումների Արևը երկնակամարում կտրում-անցնում է 30 յոջան: Սավիտարին ձոնված ներքողի (1.35.8) թարգմանության մեջ այս բառը տառադարձված է՝ հայերենում համարժեք չլինելու պատճառով:

aṣtā vi akhyat kakūbhah prthivyās
tri dhanva yojana sapta sindhūn
hiranyākṣah savitā deva āgād
dādhad ratna dasūṣe vāriāni.

Նայում է ութ գազաթներին նա մալր երկրի,
երեք հովտին, յոջաններին, յոթ գետերին.
Եկավ աստված Սավիտարը ոսկեալվի
Ու բաղձալի զանձեր սփռեց պաշտողներին:

dāsa (2.12.4)—գասա (ոչ արիական ցեղերի անվանումը, նախնական իմաստը՝ դև, դիվային):

varṇa (2.12.4)—վարնա (բառացի՝ գույն):

yēnemā viśvā cyāvanā kṛtāni,
yā dāsam varnam adharam gūhākah,
svaghnīva vō jīgīṣām laksam ājad
aryaḥ pustāni sa. janāsa, īndrah.

Ով որ գործեց բեկումներն այս ամենայն,
Դասան դարձրեց ստորին վարնա, աննշմա՞ր,
Ով շահելով հանց խաղամու, ավարեց
Ինչքն օտարի.—այդ Ինդրան է, օ՝ մարդիկ:

trikadrūka (10.14.16)—տրիկադրուկ (Սոմայի եռօրյա հեղումը, որն անմիջապես հաջորդում էր հանգուցյալի դիակիզմանը. բառացի՝ 3 աման, որոնցով զոհաբերության ժամանակ հեղում էին սուման)¹⁶:

asura—ասուր [բառացի՝ կյանք ունեցող, կենսալիան ուժով օժտված: Ռվ-ում օգտագործվում է որպես տարբեր աստվածների և դևերի դասի անուն (հմմտ. իրանական ahura)]:

¹⁶ Սոման արբեցնող ըմպելիքի աստվածն է, միաժամանակ այն հյութը, որ քամում էին լեռնաշամիչաղզիների ընտանիքին պատկանող համանուն բույսից:

vibhídaka (10.34.1)—վերհիդակա (ծառի անուն (Terminalia Bellerica), որի շագանակագույն ընկույզները ծառայում են որպես վեզ):

udumbala (10.14.12)—ուդումբալ: Տվյալ դեպքում մենք պործ ունենք չվերծանված բառի հետ: Գոասմանը բացատրում է բաց շագանակագույն՝ ենթադրաբար կապելով այս բառը údumbara—թղեմի բառի հետ, որի պտուղները բաց շագանակագույն են: Սակայն նա համոզված չէ այս բացատրության մեջ և փակագծում հարցական նշան է դնում: Պարզ է միայն, որ տվյալ բառը մակդիր է համայնի՝ մասվան աստծու զույգ շների համար:

Ասենք, որ շափածո թարգմանության մեջ տառադարձումից մենք օգտվել ենք ծայրահեղ դեպքերում միայն: Դա բացատրվում է առաջին հերթին հայերենի բառակազմական մեծ հնարավորություններով, հարուստ բառապաշարով, մշակվածությամբ և օտար փոխառությունների ոչ խրախուսելիությամբ: Մյուս կողմից նաև վեդայական իրականությունների անծանոթ և անսովոր լինելու հանգամանքով: Սովորաբար տառադարձումից օգտվելու անհրաժեշտությունը բացատրում են ոչ միայն թարգմանության լեզվում իրականությունների բացակայությամբ, այլև թարգմանությանը ազդային և պատմական դոկտրինայում հաղորդելու անհրաժեշտությամբ: Ասենք, որ Ռվ-ի ներբողների թարգմանության մեջ այդպիսի դեր արդեն խաղում են դիցանուններն ու անձնանունները: Բացի դրանից, վեդայական ներբողներն իրենց բովանդակությամբ այնքան յուրահատուկ են և եզակի, որ արդեն իսկ դրանով նրանց թարգմանությունը տարբերվում է առանձնանում է և կասկած չի թողնում իրենց ազդային պատկանելության մասին: Օտար բառերի անշրջափակ օգտագործումը կստիպեր ընթերցողին հաճախակի կանգ առնել և օտար բառը հասկանալու համար նայել ծանոթագրությունները: Մանավանդ որ վեդայական շատ ներբողների նույնիսկ արտաբերման հասկանալի թվացող հատվածներ վեդայական կյանքի առանձնահատկություններին անօժանոթ ընթերցողին առանց մանրամասն գիտական ծանոթագրությունների անհասկանալի են մնում: Տողացի թարգմանության մեջ ճշգրտության նպատակով տառադարձությունը շատ ավելի հաճախ է օգտագործվում: Իսկ բանաստեղծական տեքստը պետք է հայերեն հնչի, որպեսզի գեղագիտական հաճույք պատճառի: Տառադարձման հարցում հիմնականում հետևել ենք Գ. Բ. Ջահուկյանի «Օտարազգի բառերի տառադարձման սկզբունքները» հոդվածում շարադրված սկզբունքներին¹⁷:

Իրականության քաղցմանություն (կամ փոխաբերում, սուբստիտուցիա)

1. Նորաբանության ստեղծում. սա տառադարձությունից հետո թարգմանվող իրականության բովանդակության և կոլորիտի պահպանման ամենահարմար ձևն է: Նորաբանության ստեղծումն ունի մի քանի տարատեսակներ.

ա) Պատճենում—փոխառություն՝ բառի բառացի թարգմանության միջոցով: Սա հնարավորություն է տալիս իրականությունը փոխադրել թարգմանության լեզվի մեջ՝ իմաստն առավելագույնս պահպանելով:

Պատճենման միջոցով թարգմանվել են հատկապես աստվածներին վերաբերող բարդ մակդիրները: Պատճենմամբ ստեղծվել են հիմնականում այսպես կոչված հնարավոր (պոտենցիալ) բառեր: Դրանք նոր բառային միավորներ են, որոնք ստեղծվում են բարձրարդյունավետ բառակազմական կադապարներով: Նորության բույրը դրանց մեջ այնքան ուժեղ չէ տվյալ բառակազմական տիպի բարձր հաճախականության պատճառով: Հայերենի բառակազմական մեծ հնարավորությունների և բառապաշարի հարստության շնորհիվ հին հնդկերեն բազմաթիվ բարդ մակդիրներ իրենց ճշգրիտ հայերեն համարժեքն են գտնում առանց բառապատճենմանը դիմելու: Բերենք մի քանի օրինակ.

¹⁷ Գ. Բ. Ջահուկյան. Օտարազգի բառերի տառադարձման սկզբունքները.—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1972, № 3:

suga բառը կազմված է *su* մակբայից,¹⁸ որ նշանակում է լավ, ճիշտ, շատ, բարի, հեշտ և այլն: Միանալով ածականների, գոյականների, երբեմն բայարմատների հետ՝ կազմում է բարդ բառեր. *sūsuti*—քեքե ծննդաբերություն, *suscandra*—հրաշալի շողշողացող, *sukrt*—բարիք գործող: *sugā* բառը նշանակում է հեշտ անցնելի: 1.35.11-ում այն որոշել է Սավիտար աստծու ճանապարհի համար: Հայերենում այդ բառն ունի ճշգրիտ համարժեքը՝ դյուրանցիկ: Հետաքրքիր է, որ հին հնդկերեն մեկ այլ բառ՝ *sutāra*, որն օգտագործվում է անցկացնելիք ժամանակի համար (*sutara ratri*—հեշտ անցնող զիշեր) հայերեն թարգմանվում է նույն դյուրանցիկ բառով: Ահա դյուրանցիկ բառի կիրառությունը երկու տարբեր համատեքստերում.

Ուղիներովդ օդային, ո՛վ Սավիտար,
Վաղնչական, մաքրամաքուր ու բարեկերտ,
Ուղիներովդ դյուրանցիկ անցնելով՝ ա՛րդ
Պաշտպանի՛ր մեղ, մեր անունից խոսիր, ո՛վ Տեր: (1.35.11)

Քշի՛ր գողին, անմահ Ռատրի¹⁹,
Քշի՛ր գալի՛ն՝ էգ և արու.
Ու մեզ համար եղիր թեթև՝ ու դյուրանցի՛կ: (10. 127.6)

Այդպես և. *svātavas* (1.85.7)—ինքնագոր (ելիզարենկովան թարգմանում է՝ *сильные сами по себе*, *Գելզներ*, von selbst stark): *brahmadviṣ* (10.125.6)—աղոթալաց (ռուս. ненавистник молитвы, *գերմ.* den Feind der heiligen Rede): *namadha* (10.82.3)—անվանադիր (ռուս. кто .. дает имена (богам), *գերմ.* der... Namensgeber): *vrata-carin* (7.103.1)—ուխաղատար (ռուս. исполняющие обет (брахманы), *գերմ.* Brahmanen, die ein Gelübde einhalten): *surētas* (1.160.3)—սերմնահորդ և ալլն:

Իսկ այժմ քննենք այն բառերը, որոնք հայերեն թարգմանվել են պատճենման միջոցով.

suvidātrām (pitṛn) (10.14.10)—կարմադհարայա (karmadhāraya)²⁰ բարդություն է և կազմված է վերը նշված *su* մակբայից, *vid* բայարմատից, *ātra* առաջնային վերջածանցով: Այս բառը նշանակում է հեշտ գտնվող (ելիզ. и достижимы отцов, которых легко найти, *Գելզներ*, und gelange zu den Vätern, die leicht zu finden sind): Հայերեն թարգմանվել է՝ դյուրագյուտ (նայրերին)՝ հազվագյուտ, սակավագյուտ բառերի նմանակությամբ:

Գնա՛-հասիր մեր հայրերին դյուրագյուտ...

dosāvasī (1.1.7)—խավար լուսավորող: Այս տատպուրուշա (*tatpuruṣa*)²¹ բարդությունը կազմված է գործողության օբյեկտ-գործողություն կադապարի գոյական-գործչի անուն ցույց տվող գոյական (нмя деятеля) մասնակադա-

18 Տ. Ելիզարենկովան *su*-ն համարում է նախածանց-մակբայ: Տե՛ս Т. Я. Елизаренкова. Грамматика ведийского языка. М., 1982, с. 184.

19 Ռատրի—Գիշեր աստվածուհին:

20 Կարմադհարայա—ստորադաս բաղադրիչներով բարդ բառեր, որոնք կազմվում են որոշիչ+որոշյալ, գործողության ձև+գործողություն կադապարներով: Գերադաս անդամը համարյա միշտ վերջինն է: Կարմադհարայա բարդությունը կազմվում է ածական+գոյական, գոյական+գոյական, ածական+ածական, ածական կամ մակբայ+դերբայ (բայարմատ) բաղադրություններով:

21 Տատպուրուշա—ստորադաս բաղադրիչներով բարդ բառեր, որոնց անդամների միջև գոյություն ունեն հոլովական ինդրառության հարաբերություններ: Գերադաս անդամը վերջինն է:

պարով²²։ Այս բառը մակդիր է Ազնի աստծու համար։ (եւրդ.՝ О осветителѣ тьмѣ, Դելդ.՝ du Dunkel—Erheller, Մակդոնել՝ O, illuminer of gloom)։ Հայերեն թարգմանվել է խավարացիր։

virasāh (1.35.6)—մարդկանց (կամ հերոսների) հաղորդ։ Մակդիր է մահվան աստծու՝ Յամայի կացարանի համար։ Այս տառապնությունը բարդությունը կազմված է գործողության օբյեկտ + գործողություն կաղապարով։ Թարգմանվել է հերոսահաղթ՝ ամենահաղթ բառի նմանակությամբ։

susīpra (2.12.6)—գեղաշուրթ (մակդիր Լոգրալի համար)։ Այս բառը բահուլրիհի (bahuvrīhi) բարդություն է։²³

Մասնակի պատճենման օրինակ է citrās'avastama (1.1.5) բառի թարգմանությունը (բառը մակդիր է Ազնիի համար)։ Այս բահուլրիհի բարդությունը ունի -tama գերադրական ածանցը և բառացի թարգմանվում է՝ ամենաշողունուց փառքով (ռուս.՝ с самой яркой славою, Դելդ.՝ am meisten ruhmg-länzend, Մակդոնել՝ of most brilliant fame)։ Բանաստեղծական թարգմանության մեջ ածական + գոյական կաղապարով կազմվել է ճանաչափառ ածականը։ Բնականաբար գերադրական աստիճանը բացակայում է, և դրա կարիքը չկա էլ։

Ազնին՝ ձոնիլ քանքարախոհ,
Էշմարիտ ու հաճանափառ,
Աստվածն աստվածներով թող դա։ (1.1.5)

vr̥savrata (1.85.4) բառը մակդիր է Մարուտների համար (vr̥sa—ցուլ, իսկ vrata—ամբոխ, բազմություն)։ Յուրը հնդիկների համար հզորություն, ուժի, առնականության խորհրդանշն է։ Այսինքն ցուլ բառը պատկանում է, այսպես կոչված, զուգադրական (ասոցիատիվ)²⁴ իրակությունների թվին։ Ուստի բարդությունը թարգմանվում է հզոր խմբով, բազմությամբ։ Բանաստեղծական թարգմանության համար կազմել ենք հզորամբոխ բարդությունը (բառացի պիտի լինե՛ր՝ ցլամբոխ)։

Ո՛վ Մարուտներ, հզորամբոխ...

Այս բառերում պատճենումը փաստորեն հիմնականում կատարվում է ըստ բնագրի թելադրած կաղապարի, երբ բարդ բառի անդամների միջև եղած իմաստային հարաբերությունները ճշգրիտ արտացոլում են գտնում թարգմանության լեզվում։ Սակայն հաճախ թարգմանիչը ստիպված է հրաժարվել կառուցվածքային և իմաստային պատճենումից և նոր համապատասխանություններ հնարել՝ ելնելով բնագրի բառի ընդհանուր իմաստից և ոճաբանական գործառնությունից։ Դա բացատրվում է 1. բառակազմական սխտեմների տարբերություններով, 2. համեմատվող լեզուներում սովորական բառերի ներքին ձևի անհամապատասխանությամբ, որ հանգեցնում է երկու լեզուների համեմատվող բառերի միջև հասկանիչի և պատկերի անհամապատասխանության, 3. համատեքստի պահանջներով։

22 Գ. Ջաֆարյան. Հայոց լեզվի դարդացումը և կառուցվածքը. Երևան, 1969, էջ 115։ Ի. Մկրտչյան. Բարդ բառերի պատկարգումը և նրանց բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունները ժամանակակից հայերենում.— Լեզվի և ոճի հարցեր, 4-րդ պրակ, Երևան, 1977, էջ 128։

23 Բահուլրիհի—ստացական բարդ բառ Այն ամբողջությամբ հանդես է գալիս որպես «որ ունի...», «որին պատկանում է...», «որին բնորոշ է...» իմաստ ունեցող ածական։ Օրինակ՝ hiraṇyāratha—ոսկե կառք ունեցող, hiraṇyapaṇi—ոսկեծեռ և այլն։ Բահուլրիհի բարդությունների վերջին անդամն անպայման գոյական է։

24 В. С. Виноградов. Указ. соч., с. 96.

բ) Իմաստային նորաբանության միջոցով: Պայմանականորեն իմաստային նորաբանություն է կոչվում «նոր բառը կամ բառակապակցությունը, որ «հորինել է» թարգմանիչը, և որը հնարավորություն է տալիս հաղորդել իրականության իմաստային բովանդակությունը»²⁵: Իմաստային նորաբանության ստեղծումը ըստ Հ. Ջաքարյանի կոչվում է նմանակում²⁶: Նմանակման մի տարատեսակն է արտապատկերումը²⁷, երբ թարգմանիչը ստեղծում է նոր բառ, մասնակիորեն վերարտադրելով բնօրինակի ստուգաբանական ձևը. օրինակ.

yajniya (1.125.4): Կազմված է yajna զոհաբերություն բառից և -iya ածանցից: Բառը նշանակում է՝ զոհաբերությունների արժանի: Ստեղծվել է զոհաբան բարդ բառը, որի առաջին անդամը կրկնում է բնօրինակի արմատի ստուգաբանական ձևը, սակայն ամբողջության մեջ կազմվել է ըստ բնօրինակի նշանակության:

sravasyú (1.85.8) բաղադրյալ ածականը կազմված է śravas փառք բառից և -yu ածանցից: Բառը նշանակում է փառք ունեցող: Թարգմանվել է փառախոսով:

atirātra (7.103.7): Բառացի նշանակում է՝ որ տևում է ողջ գիշերը: Մեկ օր ու գիշեր տևող Սոմայի զոհաբերության գիշերային հատվածի անվանումն է: Թարգմանվել է ցայգառոն (ելիդ.՝ на ночном празднике Сомы, Մակդոնել՝ at the over night soma sacrifice): Ստեղծված բառի մեջ գիշեր արմատը պահպանվում է, սակայն ամբողջության մեջ բառը կազմված է ըստ բնօրինակի նշանակության:

Նմանակման մեկ այլ տարատեսակը վերածումն է²⁸, երբ բնօրինակում ամբողջությամբ կատարվում է ըստ բնօրինակի նշանակության, և բնօրինակի ներքին ձևը թարգմանության մեջ արտահայտվում է ինքնուրույն կերպով:

kavikratu (1.1.5) բահուվրիհին հալերեն թարգմանվում է բանաստեղծի, իմաստունի խորաքափանցություն ունեցող (kaví իմաստուն, բանաստեղծ, kṛātu—իմաստություն, խորաքափանցություն): Բնագրի ներքին ձևը պատճենել չենք կարող, ուստի հորինում ենք մի բառ, որն ինչ-որ չափով արտահայտում է բնագրի բառի ընդհանուր իմաստը՝ ֆանաբախոն: Քանքար նշանակում է մեծ ձիոր, տաղանդ, խելք, շնորհք: Քանաբախոն, այսինքն՝ տաղանդավոր, ֆանաբեղ միտք ունեցող:

ghṛtá (1.85.3, 5.11.3): Այսպես է կոչվում արդար լուղը, որը հատուկ զոհաբերական գդալով լցնում են զոհաբերական կրակի մեջ: Չեզոք սեռի այս գոյականը փաստորեն ցիդ կաթեցնել, ցողել բայի պերֆեկտային զերբայն է: Բառն իր բնիմաստով թարգմանել չենք կարող, ուստի օգտվում ենք տվյալ բառային միավորը բացատրող նկարագրական դարձվածից, որը կրճատելով կազմում ենք տվյալ իրականությունը բացատրող բառ: ghṛta—զոհալուղ:

Այսպես և. barhis (1.85.6)—զոհախոտ կամ զոհածղոտ (այն խոտը՝ փովածքը, որի վրա նստում են աստվածները զոհ մատուցողների հետ միասին, և որի վրա շարվում են նվիրաբերությունները):

havis (10.121.1)—զոհախմիչք: Կազմված է hu լցնել, հեղել բայից Հալած կարագ է, որ լցնում են կրակի մեջ, և որի շնորհիվ մյուս աստվածները

²⁵ С. В л а х о в, С. Ф л о р и н. Указ. соч., с. 89.

²⁶ Հ. Ջաքարյան. Փոխառությունների կառուցվածքային-իմաստաբանական դասակարգումը.—Նրիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտական շորրորդ կոնֆերանս (զեկուցումների դրույթներ): Նրևան, 1984, էջ 15: Հեղինակը իմաստային նորաբանության մյուս տարատեսակների համար առաջարկում է արտապատկերում և վերածում տերմինները:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում:

(Ագնիի միջոցով) գալիս են զոհաբերության վայրը: Նաև այն յուզը (կաթից ստացված), որ լցնում են սոմայի մեջ, կամ էլ սոմայի հյութը, որի մեջ արդեն լցված է այդ յուզը:

hótṛ (1.1.1)—կազմված է hu լցնել, հեղել կամ hū կանչել, ոչել բա-
լերից: Այսպես էր կոչվում այն քուրմը, որը զոհածեսի ժամանակ բարձրաձայն
արտասանում էր ներբողները, այդպիսով ուղեկցելով Երգիչների յուրաքանչ-
յուր բառատողը: Այս իրակության համար կաշմել ենք ձոնասաց բառը հե-
ֆիաքասաց բառի նմանակությամբ: Համապատասխանաբար ձոներգերը կա-
տարող երգիչների խմբավարի անունը՝ udgatṛ թարգմանվել է ձոնեգու:
Ասենք, որ այս բառերը պատահականորեն չէ, որ կազմվել են ձոն բառով:
Հայկադյան բառարանում ձոնեմ նշանակում է մատուցանել, նվիրել, բնծալել,
սպասարկել, ինչպես նաև հստակել: Ձոնիչ են կոչվել նվիրող, մատուցող քուր-
մը և քահանան: Իսկ ձոնումն նշանակում է նվիրատվություն:

vidātha (8.58.14, 1.85.1)—տոնական հավաքություն տեղ, ծիսական ժո-
ղով:—atha ածանցը միանում է vid գտնել արմատին և տալիս է նրան
կոնկրետ իմաստ (Գրոտմանը թարգմանում է Versammlung zum Gottes-
dienste, religiöse Festversammlung, ելիզ.՝ на ритуальном собрании): Հա-
կերեն թարգմանել ենք ծիսածողով:

2. Սոտավոր թարգմանություն. Իրակությունների մոտավոր թարգմանու-
թյան միջոցով հնարավոր է դառնում հաղորդել իրակության առարկայական
բովանդակությունը, բայց կոլորիտը միշտ կորչում է, քանի որ տեղի է ունե-
նում սպասվող համարժեքի (որ լեզվում բացակայում է) փոխարինում ոճա-
կան տևականից շեղոք բառով: Թարգմանության այս եղանակն ունի իր տա-
րատեսակները:

ա) Թարգմանություն՝ մասնավոր հասկացությունը բնդհանուրով փո-
խարինելով (կամ հակառակը)։

cicclika (10.146.2)—Թոչնի տեսակ է: Բանաստեղծական թարգմանու-
թյան մեջ թարգմանվել է պարզապես թոչուն: Այսինքն տեսակի անվանումը
փոխարինվել է կարգի անվանումով:

purōhita (1.1.1)—բառացի՝ առաջադրված (puras առաջ, առջև + hita, dha
դնել բայի պերֆեկտային դերբայը): Այսպես է կոչվում արքայական տան
քրմապետը կամ բնտանեկան մոզը: Թարգմանել ենք քրմապետ բառով, սա
ավելի բնդհանուր հասկացություն է, և purōhita բառի ճշգրիտ իմաստը չի
արտահայտում:

ṛtá—այս բառը առ շարժվել բայի պերֆեկտային դերբային է, որ օգտա-
գործվում է ո՞րպես ածական, և՛ որպես գոյական: Որպես ածական նշանա-
կում է անցնող, ճիշտ, ճշմարիտ, իմաստուն, որպես գոյական բարդ փոխհո-
վաչական հասկացություն է արտահայտում: Տիեզերքը հնդիկների պատկե-
րացմամբ մի հսկայական համաշխարհային զոհաբերություն է, քանի որ Ագ-
նին՝ պաշտամունքային աստված լինելով, միաժամանակ տիեզերական աստ-
վածություն է: Այսպիսով ծեսի և նրա մեջ տիրող կարգունակն ու մասին պատ-
կերացմանը ավելանում են տիեզերքում տիրող օրենքի մասին պատկերա-
ցումները: Մեծը ներկայացվում է որպես յուրահատուկ փոքրիկ տիեզերք, որի
մեջ հավաքված են աշխարհի բոլոր կարեւորագույն տարերքներն ու ուժերը: Այս
երկու ոլորտները, երկու կարգավորվածությունները՝ տիեզերքը և ծեսը, կապ-
ված են խորհրդավոր կապերով: Այդ կարգն ու կանոնավորությունը, աստվա-
ծային օրենքը, որ տիրում է երկու փոխկապակցված ոլորտներում, կոչվում է
ṛtá: Օրենքի ṛtá-ն այն կարգն ու հաջորդականությունն է, որ բոլոր մանբա-
մասներով անխախտ պահպանվում է արարողության ժամանակ: Տիեզերա-
կան ṛtá-ն աշխարհում իշխող օրենքն ու կարգն է. տարվա եղանակների, գի-
շերվա ու ցերեկվա հաջորդականությունը, լուսատուների շարժումը, երևույթ-
ների փոխկապակցվածությունը: Այդ ṛtá-ն տարբեր ոլորտների աստվածնե-

րի ստեղծագործական գործունեության արդյունքն է: Տիեզերական ստեղծագործության համար օգտագործվում են *vrata* և *dharma* տերմինները, որոնք կարելի է թարգմանել *օրենք*, պատգամ, հիմք և այլն: Իսկ *ṛtá*-ն անթարգմանելի է, քանի որ ծեսի համար այդ բառն օգտագործելու դեպքում միշտ նկատի ունեն նրա կապը տիեզերական օրենքի հետ և հակառակը: Օվսյանիկո-Կուլիկովսկին²⁹ գտնում է, որ այս բառը պետք է պարզապես տառադարձել, սակայն բանաստեղծական թարգմանության մեջ այն թարգմանում ենք *օրենք*, կարգ կամ նշմարաբանություն բառերով: Այս թարգմանությունը մոտավոր է, որովհետև *ṛtá*-ն, ինչպես տեսանք, խիստ լայն ու համապարփակ հասկացություն է: ք) Փոխարինում գործառական համարժեքով:

Սա այն դեպքն է, երբ իրականության մի տեսակն անվանող բառը փոխարինվում է մեկ այլ տեսակի անունով:

Այս միջոցին հետևելով, օրինակ, *vájra*³⁰ (1.85.9) բառը, որ Ինդրայի զենքի անվանումն է, թարգմանվել էր տեղ: (Մակդոնելն այս բառը թարգմանել է *bolt*, *thunder-bolt* կայծակնաճեղ, նետ-կայծակ: Գրասմանը թարգմանում է *Donnerkeil der Indra*—ամպրոպասեղ: Գելգեները թարգմանում է *die Keule*—մահակ, *Նիդարենկովան*՝ *дубина*): Սակայն ամեն դեպքում մեզ համար պարզ չէր, թե վերջիվերջո *vájra*-ն ինչ զենք է: Վեդայական շրջանից մշակույթի նյութական արժեքներ համարյա չեն պահպանվել, իսկ աստվածների ու շրջանի քանդակներում Ինդրան պատկերվում է տապալրով: Ռիվում *vajra*-ի համար օգտագործված 32 մակդիրներից ուշադրություն դարձրեցինք *vajra*-ի արտաքին տեսքին, կառուցվածքին վերաբերող մակդիրների վրա: *ayasá*—երկաթե, *tigmá*—սուր, սրածայր, *darśata*—գեղեցիկ, երևելի, *dyumāt*—փայլուն, շողշողուն, *parya*—խոցող, *vapuṣṭara*—գեղեցիկ, հրաշալի, *sataparvan*—հարյուր մասանի, *satasrī*—հարյուրակող, հարյուրասայր, *subhṛa*—շողշողուն, *sahāsrabhrstī*—հազարասայր, *stāvira*—ուժեղ, ամուր, *hari*—սսկեփայլ, *hiranyāya*—ոսկյա և այլն: Հատկապես ուշագրավ են *sātāsī*—հարյուրակող, հարյուրասայր, *sahasrabhrstī*—հազարասայր մակդիրները: Այդ ի՞նչ մահակ է, որ պատրաստված է երկաթից կամ ոսկուց, շողշողուն է և հազարասայր: Արդյոք գուրզը չէ՞, որ իսկապես բազմաթիվ սուր ծայրերով մահակ է: Տ. Յա. Նիդարենկովան, որին գրել էինք այդ մասին, հաստատեց, որ *vajra*-ն հավանաբար գուրզն է: Այսպիսով իրականության մանրամասն և հնարավորին չափ սպառիչ ուսումնասիրությունը թույլ է տալիս խուսափել մոտավոր թարգմանությունից և գտնել օտար իրականության ճշգրիտ համարժեքը: Իսկ այժմ քննենք մոտավոր թարգմանության մի քանի օրինակներ:

ṛsi (1.1.2, 10.81, 1.125.5): Այսպես է կոչվում ներբողների հորինողը, երգիչը: Նշանակում է նաև իմաստուն, մաքաբ: Գելգեները և Նիդարենկովան պարզապես տառադարձում են այս բառը: Մեր չափածո թարգմանության մեջ այս բառը թարգմանվում է մաքաբ և կամ իմաստուն, բայց կարող է և տառադարձվել, քանի որ այս իրականությունը ինչ-որ չափով ծանոթ է հայ ընթերցողին հնդկական գրականության թարգմանություններից:

Ձե՞ր ինքս եմ բարբառում այն, ինչը որ

Աստվածներին ու մարդկանց է ցնծացնում:

Ում որ սիրեմ, կղարձնեմ ես հզոր,

Դարձնեմ բրահման, կամ մարգարե, իմաստուն: (10.125.5 «Խոսքը»)

aksa (10.34): Այս բառով են կոչվում *vibhīdaka* ծառի բաց շաղանակազույն ընկուղիներից պատրաստված խաղաքարերը, իսկ նույն բառի հոգնա-

²⁹ Д. Н. Овсяннико-Куликовский. Основы ведизма—Собрание сочинений. Т. 6, СПб., 1909. с. 172—231.

կի թվով կոչում են համապատասխան խաղը, որն ունեւ որոշակի կանոններ (կիդարենկովան թարգմանում է *кость: Գեղեններ՝ der Wurfel, Մակդոնելը՝ die for playing*): Մենք թարգմանել ենք գործառական համարժեքով՝ վեգ: վեգը ճանն է կամ տափակ քարը, որով խաղում են հիմնականում երեխաները: Այս երկու խաղերը՝ հնդկացիներ և հայկականը, և՛ խաղաքարերի նյութով, և՛ իրենց կանոններով տարբեր են, բայց տվյալ դեպքում թարգմանիչը այլ ելք չունի, քան գործառական համարժեքից օգտվելը:

Երբ վճռում եմ. էլ նրանց հետ չեմ խաղա,
 Ձեռք կբաշեմ ընկերներից՝ խաղատեղի գնացող,—
 Ձայն են տալիս ինձ վեգերը դարձնազույն,
 Ու շտապում եմ սիրուհու պես հանդիման: (10.34.5 «խաղամուր»)

դ) Եվ վերջապես նկարագրական կամ մեկնական թարգմանությունը, երբ բառը թարգմանության մեջ պարզապես բացատրվում է.

krta (10.34.6)—վեգ խաղի տերմին է, որ նշանակում է հաջող ցեղում և այդ բառակապակցությամբ էլ թարգմանվում է: Եթե նետելու կամ բռնելու ժամանակ վեգերի թիվը բաժանվում էր 4-ի, ապա խաղացողը շահում էր (*krta*), իսկ եթե ավելորդ վեգեր էին մնում, դրանք զիջվում էին որպես առանձին միավորներ, և խաղացողը տանուլ էր տալիս. անհաջող նետումը կոչվում էր *kalí*:

havišmant (10.125.2) (*haviš*—զոհախմբիչ, *-mant*՝ ածանց, որն ախտեղ ցույց է տալիս առարկա ունեցողին): *havišmant*՝ ախտինքն նա, ով զոհախմբիչը ունի. այդպես էր կոչվում այն քուրմը, որ զոհախմբիչը զգալով լըցնում էր կրակի մեջ: Թարգմանել ենք զոհախմբիչի լցնող բառակապակցությամբ:

rājasī (1.160.4)—զուլզ ոլորտը (երկնալին և երկրալին տարածություններ):

Այսպիսով Ռվ-ի ներբողները թարգմանելիս օգտվել ենք անթարգմանելիության հաղթահարման բազմաթիվ միջոցներից, որպեսզի թարգմանությունը լինի բնագրին առավելագույնս հարազատ և ներգաշնակ:

СРЕДСТВА ПЕРЕДАЧИ ФОНОВОЙ ЛЕКСИКИ ПРИ ПЕРЕВОДЕ РИГВЕДЫ НА АРМЯНСКИЙ ЯЗЫК

В. В. АРАКЕЛЯН

Резюме

Статья посвящена вопросу передачи ведийских реалий на материале 25 переведенных нами на армянский язык гимнов Ригведы (в прозаическом и поэтическом переводе). Благодаря большим словообразовательным возможностям и гибкости армянского языка удастся воспроизвести ведийские реалии не столько путем транскрипции, сколько посредством кальки, создания смыслового неологизма, приближенного перевода и т. п.